

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**  
Արայիկ Հարությունյանին-ին

**ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ**  
Ղարիբ Հարությունյան-ից

Ք. Գյումրի, Վ. Սարգսյան փող., շենք 1,  
քնակ.25

Հեռ.՝ 093 972993

Էլ. փոստ՝ gharutyunyan84@gmail.com

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ  
N03Ա950768

**ԴԻՄՈՒՄ**


Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.


1. Դիմում խորհրդի նախագահի անունով
2. Կանոնադրություն և պետական գրանցման վկայական
3. Տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ.
4. Մտտիվացիոն նամակ
5. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ոլնագրում ԿԳՆ գործունեության և կրթության ընագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝ «Կոմպասս» գիտահետազոտական,  
կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ նախագահ  
Ղարիբ Հարությունյան

«24» Մայիս 2018 թ.









«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ

## ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ՆԱՄԱԿ

### Հասարակական խորհրդում «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ի ներգրավման վերաբերյալ

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ն իր գործունեությունը սկսել է 2014թ. փետրվար ամսից: Կենտրոնի նպատակներն ուղղված են Հայաստանի սոցիալական, տնտեսական, հասարակական, կրթական, քաղաքական և այլ ոլորտների արդյունավետ զարգացմանը՝ հետազոտությունների իրականացման, կրթական ծառայությունների և խորհրդատվության տրամադրման միջոցով:

Գյումրիում «Կոմպասս» ՀԿ-ի ստեղծումը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով

- Հասարակական կյանքի տարբեր ոլորտների գիտական հետազոտությամբ զբաղվող, ինչպես նաև կրթական ու խորհրդատվական ծառայություններ մատուցող անկախ կենտրոնի բացակայություն
- Տարբեր ոլորտներում հետազոտական մեծ ներուժի առկայություն
- Երիտասարդության շրջանում գիտահետազոտական գործունեության սակավություն
- Գիտահետազոտական, կրթական ու խորհրդատվական ոլորտներում համագործակցության ցանցի բացակայություն
- Արդիական հիմնախնդիրների ու թեմաների հիմնավոր հետազոտությունների սակավություն:

«Կոմպասս» ՀԿ-ն իր գործունեության ընթացքում բազմիցս առընչվում է թե՛ ՏԻՄ-ի և թե՛ Կառավարության մի շարք մարմինների հետ, և Կենտրոնի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է նաև այդ համագործակցության բնույթից ու ձևաչափից:



